



GEF



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ  
ՄԱԶԾ-ԳԷՀ միջին ծավալի ծրագիր**

**ԲԱՂԱԴՐԻՉ 1**

**Պահպանվող տարածքների համակարգի ռացիոնալացում**

**Արդյունք 2**

**Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների  
հստակեցման նպատակով ինստիտուցիոնալ կապերի ձևավորում**

**ԶԵԿՈՒՅՑ**

**Տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի  
կառավարման առանձնահատկությունների բացահայտում**

**Ե Ր Ե Վ Ա Ն**

**2010**

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ ՅՈՒ Ն

Ներածություն .....	3
1. Հայաստանի պետական արգելավայրերը .....	6
2. Հայաստանի պետական արգելավայրերի ստեղծման և կանոնադրությունների մշակման սկզբունքները .....	9
2.1 Արգելավայրերի ստեղծման նպատակները և սկզբունքները .....	9
2.2 Արգելավայրերի կանոնադրությունների մշակման սկզբունքները .....	15
3. Տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունները .....	17
3.1 ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության ՊՈԱԿ-ներից ստացված տեղեկատվությունը .....	18
3.1.1 Պետական արգելոցներից ստացված տեղեկատվության վերլուծությունը.....	18
3.1.2 Ազգային պարկերից ստացված տեղեկատվության վերլուծությունը .....	20
3.1.3 <<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության վերլուծությունը .....	22
3.1.4 <<Անտառային գիտափորձարարական կենտրոն>> ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության վերլուծությունը .....	23
3.2 ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից ստացված տեղեկատվությունը .....	23
3.3 ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից ստացված տեղեկատվությունը .....	24
4. ՀՀ պետական կառավարման տարածքային մարմինների տեղեկատվությունը արգելավայրերի վերաբերյալ .....	24
5. Ամփոփում .....	27

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների (այսուհետ՝ ԲՀՊՏ) ստեղծման գործընթացը սկսվել է 1958 թ.-ից, երբ ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1958 թ.-ի սեպտեմբերի 13-ի թիվ Պ-341 որոշմամբ, բացի «Խոսրովի», «Դիլիջանի» և «Շիկահողի» պետական արգելոցներից, ստեղծվել են նաև «Արջատիլենու», «Հեր-Հերի նոսրուտային», «Գյուլագարակի սոճուտ», «Գիհու նոսրանտառային», «Ախնաբադի կենու», «Ջերմուկի» և «Մոսու պուրակ» պետական արգելավայրերը: Մինչ օրս ստեղծվել են 27 պետական արգելավայրեր, որոնց ընդհանուր տարածքը կազմում է 106825,05 հա: Խոշորագույններն են «Ջերմուկի ջրաբանական», «Զանգեզուր», «Արզական-Մեղրաձորի» արգելավայրերը, որոնց տարածքները համապատասխանաբար կազմում են 18000,0 հա, 17368,77 հա և 13532,0 հա: Պետական արգելավայրերից 13-ը կառավարվում են ՀՀ բնապահպանության, 13-ը՝ ՀՀ գյուղատնտեսության և 1-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից: Տեղական ինքնակառավարման մարմինները (այսուհետ՝ ՏԻՄ) ընդգրկված չեն պետական արգելավայրերի կառավարման գործընթացներում: ՏԻՄ-երի հետ համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է ԲՀՊՏ-ների սահմանների ճշգրտման և համաձայնեցման գործընթացով: Ինչ վերաբերվում է պետական կառավարման տարածքային մարմիններին՝ մարզպետարաններին, ապա օրենքով սահմանված իրավասությունների շրջանակներում նրանք լիազորված են մասնակցելու ԲՀՊՏ-երին առնչվող պետական ծրագրերի և կառավարման պլանների մշակմանն ու աջակցելու ԲՀՊՏ-ների պահպանությունն իրականացնող ծառայություններին: ՏԻՄ-երը և մարզպետարանները չունեն բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված նպատակային ֆինանսական միջոցներ:

«Հայաստանի պահպանվող տարածքների զարգացում» ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրում առանցքային նշանակություն ունի արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների հստակեցման նպատակով ինստիտուցիոնալ կապերի ձևավորումը: Սույն խնդրի լուծման համար նախ անհրաժեշտ է բացահայտել տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունները: Այդ նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՊՈԱԿ) դիմել է ՀՀ գյուղատնտեսության և էկոնոմիկայի նախարարություններին, պետական կառավարման տարածքային մարմիններին, «Խոսրովի անտառ» պետական արգելոց», «Շիկահող» պետական արգելոց», «Սևան» ազգային պարկ», «Դիլիջան» ազգային պարկ», « Արևիկ» ազգային պարկ», «Արգելոցապարկային համալիր» և «Անտառային գիտափորձարարական կենտրոն» ՊՈԱԿ-ներին՝ խնդրելով պաշտոնական տեղեկատվություն տրամադրել 2007-2010 թթ. պետական արգելավայրերի պահպանության ուղղությամբ (ֆինանսական, կազմակերպչական, ուսուցողական, ծագած խնդիրների լուծմանն ուղղված մոտեցումներ, տարածքային կառավարման և ՏԻՄ-երի հետ համագործակցություն) իրականացված

աշխատանքների վերաբերյալ: Միաժամանակ ձեռք են բերվել ՀՀ կառավարության և, ՀՀ ազգային արխիվից ՀՍՍՀ Մինիստրների սովետի, պետական արգելավայրերի ստեղծման մասին որոշումները:

Ձեռք բերված փաստաթղթերի ցանկն ընգրկում է հետևյալը.

1. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1958 թ.-ի սեպտեմբերի 13-ի թիվ Պ-341 որոշումը <<Արջատիլենու>>, <<Հեր-Հերի նոսրուտային>>, <<Գյուլագարակի սոճուտ>>, <<Գիհու նոսրանտառային>>, <<Ախնաբադի կենու>>, <<Ջերմուկի>> և <<Սոսու պուրակ>> պետական արգելավայրերի ստեղծման մասին.
2. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1959 թ.-ի հունվարի 29-ի թիվ 20 որոշումը <<Կովկասյան մրտավարդենու>>, <<Գոռավանի ավազուտներ>>, <<Արագածի ալպյան>> և <<Բանքսի սոճու>> պետական արգելավայրերի ստեղծման մասին.
3. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1971 թ.-ի ապրիլի 09-ի թիվ 212 որոշումը <<Մարգահովիտի>>, <<Արզական-Մեղրաձորի>>, <<Իջևանի>>, <<Գանձաքարի>>, <<Գետիկի>> պետական արգելավայրերի ստեղծման մասին.
4. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1971 թ.-ի նոյեմբերի 16-ի թիվ 375 որոշումը <<Եղեգնաձորի>> պետական արգելավայրի ստեղծման մասին.
5. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1972 թ.-ի նոյեմբերի 06-ի թիվ 775 որոշումը <<Գորիսի>> պետական արգելավայրի ստեղծման մասին.
6. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1981 թ.-ի մարտի 23-ի թիվ 148 որոշումը <<Ջերմուկի ջրաբանական>>, <<Հանքավանի ջրաբանական>> պետական արգելավայրերի ստեղծման մասին.
7. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1987 թ.-ի փետրվարի 02-ի թիվ 61 որոշումը <<Որդան կարմիր>> պետական արգելավայրի ստեղծման մասին.
8. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1987 թ.-ի նոյեմբերի 17-ի թիվ 717 որոշումը <<Սև լիճ>> պետական արգելավայրի ստեղծման մասին.
9. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1989 թ.-ի նոյեմբերի 16-ի թիվ 400 որոշումը <<Բողաքարի>> պետական արգելավայրի ստեղծման մասին.
10. ՀՀ կառավարության 2007 թ.-ի հունվարի 25-ի թիվ 957-Ն որոշումը <<Խոր Վիրապ>> պետական արգելավայրի ստեղծման մասին.
11. ՀՀ կառավարության 2007 թ.-ի մայիսի 24-ի թիվ 673-Ն որոշումը <<Գիլան>> պետական արգելավայրի ստեղծման մասին.
12. ՀՀ կառավարության 2009 թ.-ի հոկտեմբերի 15-ի թիվ 1187-Ն որոշումը <<Զանգեզուր>> պետական արգելավայրի ստեղծման մասին.
13. ՀՀ կառավարության 2010 թ.-ի ապրիլի 08-ի թիվ 380-Ն որոշումը <<Զիկատար>> պետական արգելավայրի ստեղծման մասին.
14. ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվությունը՝ համակարգում ընդգրկված <<Արջատիլենու>>, <<Գյուլագարակի>>, <<Ջերմուկի անտառային>>, <<Հերիերի նոսրանտառային>>, <<Կովկասյան մրտավարդենու>>, <<Բանքսի սոճու>>, <<Արզական-Մեղրաձորի>>, <<Գանձաքարի>>, <<Գետիկի>>, <<Եղեգնաձորի>>, <<Իջևանի>>, <<Մարգահովիտի>>, <<Գորիսի>> և <<Բողաքարի>> պետական արգելավայրերի ֆինանսավորման մասին.

15. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տեղեկատվությունը «Արագածի ալպյան» պետական արգելավայրում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
16. ՀՀ Արարատի մարզպետարանի տեղեկատվությունը «Խոր վիրապ», «Գոռավանի ավազուտներ», «Գիլան» պետական արգելավայրերում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
17. ՀՀ Արմավիրի մարզպետարանի տեղեկատվությունը «Որդան կարմիր» պետական արգելավայրում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
18. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվությունը «Գիհու նոսրանտառային» պետական արգելավայրում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
19. ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկատվությունը «Գյուլագարակի», «Մարգահովիտի» և «Կովկասյան մրտավարդենու» պետական արգելավայրերում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
20. ՀՀ Կոտայքի մարզպետարանի տեղեկատվությունը «Արգական-Մեղրաձորի», «Բանքսի սոճու» և «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրերում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
21. ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղեկատվությունը «Գորիսի», «Սև լճի» և «Բողաքարի» պետական արգելավայրերում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
22. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի տեղեկատվությունը «Ջերմուկի ջրաբանական», «Ջերմուկի անտառային», «Հերիերի նոսրանտառային» և «Եղեգնաձորի» պետական արգելավայրերում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
23. ՀՀ Տավուշի մարզպետարանի տեղեկատվությունը «Իջևանի», «Գանձաքարի», «Ախնաբադի կենու» և «Արջատիլենու» պետական արգելավայրերում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
24. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տեղեկատվությունը «Խոր վիրապ», «Գոռավանի ավազուտներ» և «Գիլան» արգելավայրերում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
25. «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տեղեկատվությունը «Սոսու պուրակ» և «Ջանգեզուր» արգելավայրերում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
26. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեղեկատվությունը «Գիհու նոսրանտառային» արգելավայրում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
27. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեղեկատվությունը «Ախնաբադի կենու պուրակ» արգելավայրում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
28. «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեղեկատվությունը «Բողաքարի» արգելավայրում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
29. «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տեղեկատվությունը «Որդան կարմիր», «Սև լիճ», «Ջերմուկի ջրաբանական» և «Հանքավանի ջրաբանական» արգելավայրերում իրականացված աշխատանքների վերաբերյալ.
30. «Անտառային գիտափորձարարական կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկատվությունը «Զիկատար» արգելավայրում իրականացված աշխատանքների վերաբերյալ:

## 1. Հայաստանի պետական արգելավայրերը

Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգը ձևավորվել է 1958 թվականից, երբ ստեղծվել են «Խոսրով», «Դիլիջան» և «Շիկահող» պետական արգելոցներն ու մի շարք պետական արգելավայրեր: Հետագայում, կենսաբազմազանության պահպանությունը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, ԲՀՊՏ-երի համակարգը ընդլայնվեց՝ ստեղծվեցին նոր ազգային պարկեր, արգելոցներ և արգելավայրեր:

Ինչ վերաբերվում է արգելավայրերին, ապա Հայաստանում ներկայումս գործում են 27 պետական արգելավայրեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 102 334.94 հա կամ հանրապետության տարածքի 3.44 %: Արգելավայրերը հետևյալն են.

**<<Ախնաբադի կենու>> արգելավայրը** հիմնադրվել է 1959 թ., զբաղեցնում է 25 հա տարածք, գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Միափորի լեռնաշղթայի Ծաղկոտ լեռնաբազուկի վրա, Աղավնավանք գյուղի մոտ, Ախնաբադի եկեղեցու հարևանությամբ, ծովի մակարդակից 1400-1700 մ բարձրության վրա: “Դիլիջան” ազգային պարկի 2007-2011 թթ. կառավարման պլանով ընդգրկված է պարկի “Աղավնավանքի կենու” արգելոցային գոտում, որն զբաղեցնում է 1192 հա տարածք: Պահպանության օբյեկտն է ռելիկտային Կենի հատապտղային տեսակը:

**<<Արջատիլենու>> արգելավայրը** հիմնադրվել է 1958 թ., զբաղեցնում է 40 հա տարածք, գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Խաղաղաղբյուր գետի ավազանում, Իջևանի լեռնաշղթայի լանջերին, ծովի մակարդակից 1500-1800 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ ռելիկտային արջատիլենու և Կենի հատապտղայինի պուրակները:

**<<Արագածի ալպյան>> արգելավայրը** հիմնադրվել է 1959 թ., զբաղեցնում է 300 հա տարածք, գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հարավային լանջի վրա, Քարի լճի շրջակայքում, ծովի մակարդակից 3200-3350 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ սառցադաշտային Քարե լիճը և հարակից ալպյան մարգագետինները:

**<<Արգական-Մեղրաձորի>> արգելավայրը** հիմնադրվել է 1971 թ., զբաղեցնում է 13 532 հա տարածք, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, Դարալիկ և Մարմարիկ գետերի ավազաններում, ծովի մակարդակից 1600-2100 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային հազվագյուտ կենդանիները (բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մարեհավ):

**<<Բանքսի սոճու>> արգելավայրը** հիմնադրվել է 1959 թ., զբաղեցնում է 4 հա տարածք, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի ավազանում, Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերին, ծովի մակարդակից 1800-2000 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտն է Բանքսի սոճու տնկարկը:

**<<Բողաքարի>> արգելավայրը** հիմնադրվել է 1989 թ., զբաղեցնում է 2728 հա տարածք, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակարդակից 1400-2100 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ էնդեմիկ բուսատեսակները (Վարդակակաչ սոսնովակու, Խլածաղիկ թախտաջանի, Կաղնի արաքսյան և այլն):

<<Գանձարարի>> արգելավայրը հիմնադրվել է 1971 թ., զբաղեցնում է 6813 հա տարածք, գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Աղստև գետի աջափնյա վտակ Փայտաջուր գետի ավազանում, ծովի մակարդակից 820-890 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային կենդանիները:

<<Գետիկի>> արգելավայրը հիմնադրվել է 1971 թ., զբաղեցնում է 5728 հա տարածք, գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, Գետիկ գետի ավազանում, ծովի մակարդակից 1500-2700 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային կենդանիները:

<<Գիհու նոսրանտառային>> արգելավայրը հիմնադրվել է 1958 թ., զբաղեցնում է 3312 հա տարածք, գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, Արեգունի և Սևանի լեռնաշղթաների լանջերին, ծովի մակարդակից 1950-2500 մ բարձրության վրա: <<Սևան>> ազգային պարկի 2007-2011 թթ. կառավարման պլանով այն մասամբ ընդգրկված է պարկի <<Գիհի-կաղնուտային ռելիկտային>> արգելավայրային գոտում, որն զբաղեցնում է 1807 հա տարածք: Պահպանության օբյեկտներն են՝ Գիհի բազմապտուղ, Գիհի գարշահոտ և Գիհի երկարատերև տեսակների գերակշռությամբ նոսրանտառները:

<<Գիլան>> արգելավայրը հիմնադրվել է 2007 թ., զբաղեցնում է 118 հա տարածք, գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Գեղամա լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակարդակից 1330-1400 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ կիսաանապատային և նախալեռնային էկոհամակարգերը:

<<Գյուլագարակի>> արգելավայրը հիմնադրվել է 1958 թ., զբաղեցնում է 2576 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Բագունի և Գուգարաց լեռների լանջերին, Քարհանք-ջուր գետակի հովտում, ծովի մակարդակից 1300-1850 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ ռելիկտային սոճու անտառները:

<<Գորիսի>> արգելավայրը հիմնադրվել է 1972 թ., զբաղեցնում է 1850 հա տարածք, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Որոտան գետի վտակ Վարարակնի ավազանում, ծովի մակարդակից 1400-2800 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային լանդշաֆտներն ու դրանց բնորոշ կենդանական աշխարհը:

<<Գոռավանի ավազուտներ>> արգելավայրը հիմնադրվել է 1959 թ., զբաղեցնում է 95.99 հա տարածք, գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Վեդի քաղաքի հարավային մասում՝ Գոռավան գյուղի մոտ, ծովի մակարդակից 920-980 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ հազվագյուտ ավազուտային անապատը և դրան բնորոշ բուսական ու կենդանական աշխարհը:

<<Եղեգնաձորի>> արգելավայրը հիմնադրվել է 1971 թ., զբաղեցնում է 4200 հա տարածք, գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզում, Արփա գետի աջափնյա վտակ Եղեգիս գետի ավազանում, ծովի մակարդակից 1200-2800 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային լանդշաֆտներն ու դրանց բնորոշ կենդանական աշխարհը:

<<Զանգեզուր>> արգելավայրը հիմնադրվել է 2009 թ., զբաղեցնում է 17 368.77 հա տարածք, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերին: Պահպանության օբյեկտներն են՝ մարգագետնատափաստանային, ենթալպյան և ալպյան էկոհամակարգերը:

<<Զիկատար>> արգելավայրը հիմնադրվել է 2010 թ., զբաղեցնում է 150 հա տարածք, գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Գուգարաց լեռնաշղթայի Զիկատար լեռնագագաթի հյուսիս-արևելյան լանջերին, ծովի մակարդակից 1250-1650 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային բնական էկոհամակարգերը:

<<Իջևանի>> արգելավայրը հիմնադրվել է 1971 թ., զբաղեցնում է 5908 հա տարածք, գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Աղստև գետի ավազանում, Իջևանի և Կայենի լեռնաշղթաների լանջերին, ծովի մակարդակից 900-2100 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային լանդշաֆտներն ու դրանց բնորոշ կենդանական աշխարհը:

<<Խոր վիրապ>> արգելավայրը հիմնադրվել է 2007 թ., զբաղեցնում է 50.28 հա տարածք, գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Խոր Վիրապ եկեղեցական համալիրի հարևանությամբ, ծովի մակարդակից 800-890 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ խոնավ էկոհամակարգերը:

<<Կովկասյան մրտավարդենու>> արգելավայրը հիմնադրվել է 1959 թ., զբաղեցնում է 1000 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերին, ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ ռելիկտային Մրտավարդ կովկասյան տեսակի թփուտները:

<<Հանքավանի ջրաբանական>> արգելավայրը հիմնադրվել է 1981 թ., զբաղեցնում է 5169.04 հա տարածք, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի վերին հոսանքում, Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերին, ծովի մակարդակից 1950-2370 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ հանքային աղբյուրների սնման ավազանները:

<<Հերիերի նոսրանտառային>> արգելավայրը հիմնադրվել է 1958 թ., զբաղեցնում է 6139 հա տարածք, գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզում, Արփա գետի աջափնյա վտակ Հերիեր գետի ավազանում, ծովի մակարդակից 1400-2000 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ գիհու ռելիկտային նոսրանտառները:

<<Մարգահովիտի>> արգելավայրը հիմնադրվել է 1971 թ., զբաղեցնում է 3368 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերին, Փամբակ գետի ավազանում, ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ խոնավասեր անտառները և դրանց բնորոշ կենդանական աշխարհը:

<<Որդան կարմիր>> արգելավայրը հիմնադրվել է 1987 թ., զբաղեցնում է 219.85 հա տարածք, գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում, ծովի մակարդակից 835-850 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ հայկական Որդան կարմիրի աղուտային բնակության վայրերը և աղասեր բույսերը:

<<Զերմուկի անտառային>> արգելավայրը հիմնադրվել է 1958 թ., զբաղեցնում է 3865 հա տարածք, գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզում, Արփա գետի ավազանում, ծովի մակարդակից 1100-2800 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ Խոշորառեջ կաղնու լեռնային անտառները և դրանց բնորոշ կենդանական աշխարհը:



<<Ջերմուկի ջրաբանական>> արգելավայրը հիմնադրվել է 1981 թ., զբաղեցնում է 17 371 հա տարածք, գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզում, Արփա գետի վերին հոսանքում, ծովի մակարդակից 2100-2470 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ հանքային տաք աղբյուրների սնման ավազանները:

<<Սոսու պուրակ>> արգելավայրը հիմնադրվել է 1958 թ., զբաղեցնում է 60 հա տարածք, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, <<Շիկահող>> պետական արգելոցի հարևանությամբ, ձգվում է Ծավ գետի հունով մոտ 8 կմ երկարությամբ և 50-150 մ լայնությամբ, ծովի մակարդակից 700-750 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ Սոսի արևելյան տեսակի բնական պուրակը:

<<Սև լիճ>> արգելավայրը հիմնադրվել է 1987 թ., որպես պետական արգելոց, իսկ 2001 թ. վերակազմավորվել է արգելավայրի, զբաղեցնում է 240 հա տարածք, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Մեծ Իշխանասարի արևելյան լանջին, ծովի մակարդակից 2658 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտն է՝ բարձրալեռնային Սև լճի էկոհամակարգը:

## **2. Հայաստանի պետական արգելավայրերի ստեղծման և կանոնադրությունների մշակման սկզբունքները**

Հայաստանի պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունները պայմանավորված են արգելավայրերի ստեղծման և դրանց կանոնադրությունների մշակման սկզբունքներով: Հետևաբար նախ անհրաժեշտ է վերլուծել հետևյալը.

1. արգելավայրերի ստեղծման նպատակները և սկզբունքները.
2. արգելավայրերի կանոնադրությունների կառուցվածքը և բովանդակությունը:

### **2.1 Արգելավայրերի ստեղծման նպատակները և սկզբունքները**

Արգելավայրերի ստեղծման նպատակների և սկզբունքների բացահայտման հիմնական աղբյուրը ՀՍՍՀ Մինիստրնարի սովետի և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներն են: Համաձայն վերջիններիս՝ Հայաստանում գործող 27 արգելավայրերից 23-ը ստեղծվել են 1958-1989 թթ., իսկ 4-ը՝ 2002-2010 թթ.:

1958-1989 թթ. ստեղծված արգելավայրերի վերաբերյալ ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

1. 13.09.1958 թ. ստեղծված <<Գիհու նոսրանտառային>>, <<Գյուլագարակի>>, <<Ջերմուկի>> և <<Հերիերի նոսրանտառային>> արգելավայրերի համար հիմք է հանդիսացել 14.05.1958 թ. ընդունված <<ՀՍՍՀ բնության պահպանության մասին>> օրենքը: Այնուհետև հիմք ընդունելով ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի 07.12.1958 թ. գրությունը, հասցեագրված ՀՍՍՀ Մինիստրների սովետին, 29.01.1959 թ. N 20 որոշմամբ ստեղծվում են <<Բանքսի սոճու>>, <<Գոռավանի ավազուտներ>>, <<Արագածի ալպյան>> և <<Կովկասյան մրտավարդենու>> արգելավայրերը: Նշված արգելավայրերի պահպանության պատասխանատվությունը նույն որոշմամբ դրվել է ՀՍՍՀ

Մինիստրների սովետին առընթեր Անտառային տնտեսության գլխավոր վարչության վրա:

2. ՀՍՍՀ Մինիստրների սովետի 09.04.1971 թ. N212 կարգադրությամբ սահմանվում է արգելավայրային ռեժիմ Կրասնոսելսկի անտառտնտեսության Գետիկի անտառպետության, Գուգարքի անտառտնտեսության Համգաչիմանի (Մարգահովտի) անտառպետության, Իջևանի անտառտնտեսության Իջևանի և Վերին Ադրանի անտառպետությունների, Հրազդանի անտառտնտեսության Արգականի և Մեղրաձորի անտառպետությունների, ինչպես նաև Իջևանի փորձնական տնտեսության ամբողջ տարածքի վրա: Այս կարգադրության համար հիմք է հանդիսացել ՀՍՍՀ Մինիստրների սովետի Անտառային տնտեսության պետական կոմիտեի առաջարկությունը՝ *«Ղիլիջանի պետական արգելոցին կից տերիտորիայում կենդանական աշխարհի պահպանումը, ինչպես նաև որսորդական կանոնների խախտման դեմ պայքարը ուժեղացնելու նպատակով կիրառել արգելավայրի ռեժիմ որոշ անտառպետությունների և Իջևանի փորձնական տնտեսության տերիտորիայում»*:
3. Աշխատավորների դեպուտատների Գորիսի շրջանային սովետը 12.09.1972 թ. N 92-3244 որոշմամբ խնդրել է *«Հայկական ՄՍՀ Մինիստրների սովետին՝ հաշվի առնելով Որոտանի կիրճի գեղատեսիլ բնությունը, լավագույն բնակլիմայական պայմանները, հարուստ լինելը ֆաունայի և ֆլորայի մեր լեռնաշխարհին հատուկ հազվագյուտ ներկայացուցիչներով, հանքային բուժիչ ջրերով և հնարավորությունները աճեցնելու և բազմապատկելու աշխարհի տարբեր երկրների բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներ, Որոտանի կիրճը դարձնել պետական արգելանոց, որը կդառնա բնության լավագույն թանգարաններից մեկը»*: ՀՍՍՀ Մինիստրների սովետը հիմք ընդունելով այս խնդրանքը՝ 06.11.1972 թ. N 775 կարգադրությամբ *«Որոտան գետի աջ ափում եղած անտառային տարածությունները, սկսած Տանձատափի ձորից մինչև Գորիս-Ղափան տանող խճուղին՝ 1850 հեկտար տարածությամբ, համարել պետական արգելավայր»*:
4. ՀՍՍՀ Մինիստրների սովետի 23.03.1981 թ. N 148 որոշմամբ *«ՄՍՀՄ և միութենական հանրապետությունների ջրային օրենսդրության հիմունքների»* 30-րդ հոդվածին համապատասխան կազմավորվում են *«Ջերմուկի ջրաբանական»* և *«Հանքավանի ջրաբանական»* արգելավայրերը: Սույն որոշմամբ արգելավայրերի տարածքներում արգելվել է Արփա և Մարմարիկ գետերի վրա կառուցել դամբաներ, ջրամբարներ, ռոտգման և դրենաժային համակարգեր, ինչպես նաև ջրառ, գետերի հունների խորացում, կեղտաջրերով աղտոտում, անտառահատումներ, ճահիճների չորացում և այլն: Արգելավայրերի հսկողությունը դրվել է Հիդրոմետեորոլոգիայի և բնական միջավայրի հսկողության հայկական հանրապետական վարչության վրա: Որոշմամբ տրվել են նաև արգելավայրերի սահմանների նկարագրությունները և սխեմատիկ քարտեզները: ՀՀ կառավարության 30.11.2006 թ. N 1691 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում ՀՍՍՀ Մինիստրների սովետի 23.03.1981 թ. N 148 որոշումը, սակայն ՀՀ կառավարության 17.09.2009 թ. N 1063-Ն որոշմամբ կրկին ստեղծվում են սույն արգելավայրերը:

5. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 02.02.1987 թ. N 61 որոշմամբ բավարարվել է <<Հայկական ՍՍՀ շրջակա միջավայրի պահպանության պետական կոմիտեի խնդրանքը և, հաշվի առնելով Ժողովրդական դեպուտատների Հոկտեմբերյանի շրջավայրի գործկոմի, Հայկական ՍՍՀ տեղական արդյունաբերության մինիստրության, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ու Հայկական ՍՍՀ ագրոարդյունաբերական պետական կոմիտեի համաձայնությունը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թվականի սեպտեմբերի 26-ի N 595 և 1981 թվականի ապրիլի 7-ի N 189 որոշումներով Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կենդանաբանության ինստիտուտին որդան կարմիրի պահպանման և աճեցման համար հատկացված 200 հեկտար անօգտագործելի հողատարածությունը, այդ թվում՝ Արագածի սովխոզի հողերից 48 հեկտար, միջոնտեսային թռչնաբուծական ֆարրիկայի հողերից 152 հեկտար, որը Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1980 թվականի օգոստոսի 11-ի N 522 կարգադրությամբ հանձնվել է Հայկական ՍՍՀ տեղական արդյունաբերության մինիստրությանը, ետ վերցնել և հատկացնել Հայկական ՍՍՀ շրջակա միջավայրի պահպանության պետական կոմիտեին որպես արգելավայր՝ որդան կարմիրի վերարտադրություն կազմակերպելու համար>>:
6. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 10.08.1989 թ. N 400 որոշմամբ, հազվագյուտ և անհետացող բույսերի ու կենդանիների տեսակների պահպանության և վերարտադրության նպատակով, <<Հայաստան>> անտառտնտեսական արտադրական միավորման առաջարկով 2728 հա տարածքի վրա հիմնվում է <<Բողաքարի>> արգելավայրը: Նույն որոշմամբ հանձնարարվում է <<Հայաստան>> անտառտնտեսական արտադրական միավորմանը մեկամյա ժամկետում մշակել և հաստատման ներկայացնել արգելավայրի կանոնադրությունը:
7. Ինչ վերաբերվում է <<Ախնաբաղի կենու>>, <<Արջատիլենու>>, <<Գանձաքարի>>, <<Եղեգնաձորի>> և <<Սոսու պուրակ>> արգելավայրերի ստեղծման մասին ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումներին, ապա դրանց մասին ենթադրություններ կարելի է անել միայն ՀՍՍՀ Մինիստրների սովետի 13.09.1958 թ.-ի N Պ-341 որոշման 8-րդ կետի, <<Объявить заказниками территории:>>, <<г>> *ենթակետից <<по территории Армянской ССР лесные древесные и кустарниковые породы: тисс, медвежий орех, платан, грецкий орех, груша, яблоня, можжевельник и кизил.>>*:

Ընդհանրացնելով 1958-1989 թթ. արգելավայրերի ստեղծման նպատակներն ու սկզբունքները՝ կարելի է փաստել հետևյալը.

1. Հայաստանի պետական արգելավայրերը ստեղծվել են բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ օրենսդրության և ռազմավարության բացակայության պայմաններում և կրել են տարերային ու ձևական բնույթ.
2. արգելավայրերը ստեղծվել են առանց լուրջ գիտական հիմնավորումների՝ հիմնականում նպատակաուղղված անտառային տարածքների պահպանությանն ու վերարտադրությանը.

3. հիմնականում բացակայում են արգելավայրերի սահմանների նկարագրությունները. բացառություն են կազմում միայն <<Ջերմուկի ջրաբանական>> և <<Հանքավանի ջրաբանական>> արգելավայրերը.
4. չեն սահմանվել արգելավայրերի պահպանության ռեժիմները և այդ տարածքներում թույլատրելի գործողությունները (պահպանության ռեժիմի տարրեր սահմանվել են միայն <<Ջերմուկի ջրաբանական>> և <<Հանքավանի ջրաբանական>> արգելավայրերի համար).
5. այնպիսի արգելավայրեր, ինչպիսիք են <<Գետիկի>>, <<Մարգահովիտի>>, <<Իջևանի>>, <<Արգական-Մեղրաձորի>> և <<Գորիսի>> համարվել են պետական արգելավայրեր ՀՍՍՀ Մինիստրների սովետի կարգադրություններով, իսկ <<Ախնաբաղի կենու>>, <<Արջատիլենու>>, <<Գանձաքարի>>, <<Եղեգնաձորի>> և <<Մոսու պուրակ>> արգելավայրերի ստեղծման մասին ՀՍՍՀ Մինիստրների սովետի 13.09.1958 թ.-ի N Պ-341 որոշման 8-րդ կետում նշված են միայն պահպանության ենթակա օբյեկտները, ինչպես, օրինակ՝ <<**հանրապետության ողջ տարածքում կենու, արջատիլենու, սոսու, վայրի տանձենու և խնձորենու և այլն**>>: Երկու դեպքում էլ կասկածի տակ են դրվում այդ արգելավայրերի իրավական կարգավիճակները: Չնայած այս հանգամանքին՝ ՀՀ կառավարության կողմից ընդունված մի շարք որոշումներում (2002-2010 թթ. ընթացքում) հաստատվել են այս արգելավայրերի կատեգորիաները:

2002-2010 թթ. արգելավայրերի ստեղծման գործընթացները պետք է պայմանավորված լինեն ՀՀ կառավարության 26.12.2002 թ. N 54 արձանագրային որոշմամբ հաստատված <<Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագրով>>: Համաձայն վերջինիս՝ 2004-2008 թթ. ընթացքում պետք է ստեղծվեն հետևյալ արգելավայրերը.

- արգելավայրեր՝ բարձրալեռնային լճակների պահպանության նպատակով.
- <<Խոր վիրապ>> արգելավայրը՝ աղուտային ճահճային խոնավ տարածքները պահպանելու համար.
- ՀՀ Շիրակի մարզի Մանթաշ գետի ջրհավաք ավազանում.
- Արփի լիճ և Ախուրյան գետի ողողատի հատվածը մինչև Կասպի ջրամբարը՝ թռչունների պահպանության նպատակով.
- Աշոցքի կաղամախու ռելիկտային կղզյակները՝ անտառների պահպանության նպատակով.
- արգելավայրեր՝ ՀՀ Լոռու մարզի մնացորդային լճակների պահպանության նպատակով:

Նշված արգելավայրերից ստեղծվել է միայն <<Խոր վիրապ>> արգելավայրը: Մնացածների փոխարեն ստեղծվել են ևս երեք արգելավայրեր՝ <<Գիլան>>, <<Զանգեզուր>> և <<Զիկատար>>, իսկ <<Սև լիճ>> պետական արգելոցը 2002 թ. վերակազմավորվել է պետական արգելավայրի: Նշված արգելավայրերի ստեղծման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

1. ՀՀ կառավարության 12.10.2001 թ. N 976 որոշմամբ փոխվել է «Սև լիճ» պետական արգելոցի կատեգորիան՝ տալով պետական արգելավայրի կատեգորիա: Սույն որոշման մուտքում նշվում է կատեգորիայի փոփոխության նպատակը՝ *«հաշվի առնելով, որ Սև լճում առկա են Սևանի իշխանի ու Հայաստանի հազվագյուտ և անհետացման վտանգված այլ ձկնատեսակների արհեստական վերարտադրության համար ջրակենսաբանական բավարար պայմաններն ու բնական կերի հարուստ բազան»*: Հարկ է նշել, որ 17.11.1987 թ. ստեղծված «Սև լիճ» պետական արգելոցի նպատակն էր ապահովել սառցադաշտային ծագման բարձրալեռնային ռելիկտային Սև լճի ջրային հավասարակշռությունը և ջրի մաքրությունը:
2. «Խոր վիրապ» պետական արգելավայրի ստեղծման մասին ՀՀ կառավարության 25.01.2007 թ. N 975-Ն որոշմամբ նշվում է, որ *«հիմք ընդունելով «Միջազգային նշանակություն ունեցող, հիմնականում որպես ջրային թռչունների բնակավայր, խոնավ տարածքների մասին» կոնվենցիայի 2-րդ և 4-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 54 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի հավելվածի 3.3.2-րդ կետի 6-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է. Խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 50.28 հեկտար խոնավ տարածքում ստեղծել «Խոր Վիրապ» պետական արգելավայր՝ այն ներառելով «Միջազգային նշանակություն ունեցող, հիմնականում որպես ջրային թռչունների բնակավայր, խոնավ տարածքների մասին» կոնվենցիայի միջազգային նշանակության խոնավ տարածքների ցանկում»*:
3. «Գիլան» պետական արգելավայրի ստեղծման մասին ՀՀ կառավարության 24.05.2007 թ. N 673-Ն որոշմամբ նշվում է, որ *«հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համաձայնությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է բուսական և կենդանական աշխարհի պահպանությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կազմում ստեղծել «Գիլան» պետական արգելավայր՝ նրան ամրացնելով «Խոսրովի անտառ» պետական արգելոցի «Բայբուրդ» կոչված տեղամասը՝ 118 հեկտար տարածք»*: Հարկ է նշել, որ այս հիմնավորումը վիճարկվում է բնապահպանական ուղղվածության մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից՝ պատճառաբանելով, որ արգելոցի համար սահմանված պահպանության ռեժիմը առավել նպաստավոր է բուսական և կենդանական աշխարհի պահպանության համար, քան արգելավայրինը: Սակայն արգելավայրերի ստեղծման հստակ սկզբունքները ներկայումս բացակայում են

- գործող օրենսդրությունում: Հետևաբար օրենսդրական բարեփոխումներից հետո միայն հնարավոր է անդրադառնալ սույն արգելավայրի կատեգորիայի վերանայմանը:
4. <<Զանգեզուր>> պետական արգելավայր ստեղծելու մասին ՀՀ կառավարության 15.10.2009 թ. N 1187-Ն որոշմամբ նշվում է, որ <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի մերձալպյան մարգագետնային և մարգագետնատափաստանային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 17368,77 հեկտար տարածքում ստեղծել <<Զանգեզուր>> պետական արգելավայր՝ ընդգրկելով Զանգեզուրի լեռնաշղթայի Ողջի գետի ավազանի վերին հատվածը և նրա ձախափնյա Գեղի վտակի մերձափնյա՝ Բարգուշատի լեռնաշղթայի ձորակների տարածքները>>:
  5. <<Զիկատար>> պետական արգելավայր ստեղծելու մասին ՀՀ կառավարության 08.04.2010 թ. N 380-Ն որոշմամբ նշվում է, որ <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հյուսիս-արևմտյան մասում, Գուգարաց լեռնաշղթայի Զիկատար լեռնագագաթի հյուսիս-արևելյան դիրքադրության լանջերի անտառային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 150.0 հեկտար տարածքում ստեղծել «Զիկատար» պետական արգելավայր՝ ընդգրկելով Գուգարաց լեռնաշղթայի՝ Կողբ գետի աջափնյա վտակների ավազանների վերին հատվածները>>:

Ընդհանրացնելով 2002-2010 թթ. արգելավայրերի ստեղծման գործընթացը, նպատակներն ու սկզբունքները՝ կարելի է փաստել հետևյալը.

1. բացի <<Խոր վիրապ>> պետական արգելավայրի ստեղծումից, չեն ստեղծվել <<Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագրով>> նախատեսված մյուս արգելավայրերը.
2. <<Սև լիճ>> պետական արգելոցի կատեգորիայի փոփոխությունը <<Սև լիճ>> պետական արգելավայրի գուրկ է բավարար գիտական հիմնավորումից.

3. <<Գիլան>> պետական արգելավայրի ստեղծումը, <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցի տարածքների հաշվին>>, զուրկ է բավարար գիտական հիմնավորումից և որոշակիորեն հակասում է <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքի տրամաբանությանը:

**Առաջարկվող քայլերը.** Ամփոփելով Հայաստանի պետական արգելավայրերի ստեղծման վերաբերյալ ՀՍՄՀ Մինիստրների սովետի և ՀՀ կառավարության որոշումներում ամրագրված նպատակների ու սկզբունքների վերլուծության արդյունքները՝ անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

1. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքում ըստ նպատակային նշանակության հստակ տալ պետական արգելավայրերի դասակարգման չափորոշիչները՝ սահմանելով համապատասխան պահպանության ռեժիմները.
2. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքում վերը նշված փոփոխություններն ու լրացումները կատարելուց հետո վերանայել պետական արգելավայրերի կատեգորիաները:

## **2.2 Արգելավայրերի կանոնադրությունների մշակման սկզբունքները**

ՀՀ պետական արգելավայրերի կանոնադրությունների հաստատման գործընթացը սկսվել է 2002 թ.-ից և մինչ օրս ՀՀ կառավարության որոշումներով հաստատվել են հետևյալ 10 արգելավայրերի կանոնադրությունները՝

1. 29.05.2002 թ.-ի N 631 որոշում - <<Սև լիճ>> արգելավայրի.
2. 03.07.2003 թ.-ի N 830-Ն որոշում - <<Որդան կարմիր>> արգելավայրի.
3. 15.07.2004 թ.-ի N 1044-Ն որոշում - <<Սոսու պուրակ>> արգելավայրի.
4. 25.01.2007 թ.-ի N 975-Ն որոշում - <<Խոր Վիրապ>> արգելավայրի.
5. 25.01.2007 թ.-ի N 975-Ն որոշում <<Գոռավանի ավազուտներ>> արգելավայրի.
6. 09.08.2007 թ.-ի N 930-Ն որոշում - <<Գիլան>> պետական արգելավայրի.
7. 17.09.2009 թ.-ի N 1063-Ն որոշում - <<Ջերմուկի ջրաբանական>> արգելավայրի.
8. 17.09.2009 թ.-ի N 1063-Ն որոշում - <<Հանքավանի ջրաբանական>> արգելավայրի.
9. 15.10.2009 թ.-ի N 1187-Ն որոշում - << Զանգեզուր>> արգելավայրի.
10. 08.04.2010 թ.-ի N 380-Ն որոշում - <<Զիկատար>> արգելավայրի:

Հարկ է նշել, որ նշված բոլոր արգելավայրերն էլ գտնվում են ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ:

Պետական արգելավայրերի կանոնադրությունների կառուցվածքները ներառում են հետևյալ բաժինները՝

1. <<Ընդհանուր դրույթներ>>,
2. <<Արգելավայրի հիմնական խնդիրները>>,
3. <<Արգելավայրի պահպանության ռեժիմը>>:

Բացի այդ, «Ջիկատար» և «Ջանգեգուր» պետական արգելավայրերի կանոնադրություններում առկա են նաև «Արգելավայրի պահպանման գոտին», «Արգելավայրի պահպանման գոտու ռեժիմը» և «Արգելավայրի պահպանությունը» բաժինները: «Սև լիճ», «Որդան կարմիր», «Սոսու պուրակ», «Խոր Վիրապ» և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերի կանոնադրություններում պահպանման գոտին սահմանվում է «Ընդհանուր դրույթներ» բաժնում: «Հանքավանի ջրաբանական» և «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրերի կանոնադրությունների Ընդհանուր բաժնի 4-րդ կետում նշվում է, որ արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով սահմանվում է պահպանման գոտի, սակայն հստակեցված չեն պահպանման գոտու սահմանները: «Գիլան» պետական արգելավայրի կանոնադրությունում սահմանված չէ պահպանման գոտու դրույթը:

Կանոնադրությունների վերլուծության ընթացքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական բացերը:

1. Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի՝ **«Յուրաքանչյուր պետական արգելավայրի խնդիրները և ռեժիմի առանձնահատկությունները սահմանվում են տվյալ պետական արգելավայրի կանոնադրությամբ»**: Չնայած նշված արգելավայրերի կանոնադրություններում համապատասխանաբար բերված են խնդիրները, պահպանության ռեժիմներն ու թույլատրելի գործողությունները, սակայն դրանք հիմնականում կրկնում են միմյանց, հատկապես պահպանության ռեժիմի մասով, հաշվի չառնելով յուրաքանչյուր արգելավայրի նպատակային նշանակությունը: Մյուս կողմից կանոնադրություններով արգելավայրերի պահպանության ռեժիմների սահմանումը հակասում է ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի պահանջին:
2. Կանոնադրություններում բացակայում են դրույթներ արգելավայրերի պահպանության ռեժիմների ապահովման մեխանիզմների վերաբերյալ:
3. Կանոնադրություններում բացակայում է արգելավայրերի նշանակության վերաբերյալ դրույթները՝ հանրապետական, թե՛ տեղական նշանակության:
4. Կանոնադրություններում բացակայում են դրույթներ շահագրգիռ կողմերի հետ հասարակական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ:
5. «Սև լիճ» և «Որդան կարմիր» արգելավայրերի կանոնադրություններում նշված չէ, թե ո՞ր օրենքով է կատարվում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը:
6. «Գիլան», «Ջերմուկի ջրաբանական», «Հանքավանի ջրաբանական» արգելավայրերի կանոնադրություններում բացակայում են դրույթներ պահպանման գոտու վերաբերյալ: Չնայած մյուս արգելավայրերի համար տրվում է պահպանման գոտու պատկերացումը, սակայն սահմանների նկարագրությունը բացակայում է:
7. Բոլոր արգելավայրերի կանոնադրություններում բացակայում են դրույթներ արգելավայրերի կառավարման պլանների վերաբերյալ:



**Առաջարկվող քայլերը.** Արգելավայրերի կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

1. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխություններ կատարելուց հետո վերանայել նշված 10 արգելավայրերի կանոնադրությունները և մշակել մյուս 17 արգելավայրերի կանոնադրությունները՝ ներառյալ սահմանների և պահպանման գոտու սահմանների նկարագրությունները.
2. որոշել յուրաքանչյուր արգելավայրի նպատակային նշանակությունը և սահմանել յուրաքանչյուրի նշանակությունը՝ ըստ հանրապետական և տեղական նշանակության.
3. յուրաքանչյուր արգելավայրի համար որոշել շահագրգիռ կողմերի հետ հասարակական հարաբերությունների կարգավորման մեխանիզմները.
4. յուրաքանչյուր արգելավայրի համար մշակել կառավարման պլան՝ համաձայն <<ԲՀՊՏ-ների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի:

### **3. Տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունները**

ՀՀ տարածքում առկա 27 պետական արգելավայրերից 13-ը գտնվում են ՀՀ Բնապահպանության նախարարության, 13-ը՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության և մեկը՝ ՀՀ Էկոնոմիկային նախարարության ենթակայության տակ և կառավարվում են պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից (աղյուսակ 1):

Տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունների բացահայտման նպատակով <<Բնապահպանական ծրագրերի կենտրոն>> ՊՈԱԿ-ը դիմել էր ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության այն ՊՈԱԿ-ներին, ՀՀ գյուղատնտեսության և էկոնոմիկայի նախարարություններին, որոնց կառավարմանը հանձնված են արգելավայրերը՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 2007-2010 թթ. ընթացքում արգելավայրերի պահպանության ուղղությամբ (ֆինանսական, կազմակերպչական, ուսուցողական, ծագած խնդիրների լուծման նպատակով հարակից համայնքների ներգրավման և այլն) իրականացված աշխատանքների վերաբերյալ:

Արգելավայրերի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման մարմինների՝ մարզպետարանների դիրքորոշման և արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության հարցերի բացահայտման նպատակով <<Բնապահպանական ծրագրերի կենտրոն>> ՊՈԱԿ-ը դիմել էր նաև ՀՀ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզպետներին:

**Աղյուսակ 1.**

#### **Արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունները**

h/h	Նախարարությունը և ՊՈԱԿ-ը	Արգելավայրերը
1	<b>ՀՀ բնապահպանության նախարարություն</b>	

	<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց”	1. <<Խոր վիրապ>> 2. <<Գոռավանի ավազուտներ>> 3. <<Գիլան>>
	<<Շիկահող>> պետական արգելոց>>	4. <<Սոսու պուրակ>> 5. <<Զանգեզուր>>
	<<Դիլիջան>> ազգային պարկ>>	6. <<Ախնաբաղի կենու պուրակ>>
	<<Սևան>> ազգային պարկ>>	7. <<Գիհու նոսրանտառային>>
	<<Արևիկ>> ազգային պարկ>>	8. <<Բողաքարի>>
	<<Արգելոցապարկային համալիր>>	9. <<Սև լիճ>> 10. <<Որդան կարմիր>> 11. <<Զերմուկի ջրաբանական>> 12. <<Հանքավանի ջրաբանական>>
	<<Անտառային գիտափորձարարական կենտրոն>>	13. <<Զիկատար>>
<b>2</b>	<b>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</b>	
	<<Հայանտառ>>	1. <<Արջատիլենու>> 2. <<Բանքսի սոճու>> 3. << Գորիսի>> 4. << Հեր-Հերի նոսրուտային>> 5. << Գյուլագարակի>> 6. << Կովկասյան մրտավարդի>> 7. << Մարգահովիտի>> 8. << Արզականի և Մեղրաձորի>> 9. << Իջևանի>> 10. << Գանձաքարի>> 11. << Զերմուկի>> 12. << Եղեգնաձորի>> 13. << Գետիկի>>
<b>3.</b>	<b>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</b>	
	<<Երևանի ֆիզիկայի ինստիտուտ>>	1. <<Արագածի ալպյան>>

### 3.1 ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության ՊՈԱԿ-ներից ստացված տեղեկատվությունը

Ինչպես արդեն նշվել է՝ ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայությամբ գործող 13 պետական արգելավայրերից 10-ը ունեն ՀՀ կառավարության կողմից հաստատված կանոնադրություններ: Այստեղից հետևում է, որ նախարարության ենթակայության ՊՈԱԿ-ներից ստացված տեղեկատվությունը պետք է հիմնված լիներ արգելավայրերի կանոնադրություններով սահմանված խնդիրների իրականացմանը, պահպանության ռեժիմի ապահովմանը և թույլատրվող գործողություններին ուղղված աշխատանքների վրա: Հետևաբար՝ ՊՈԱԿ-ներից ստացված տեղեկատվության վերլուծությունը կատարվել է այս տեսանկյունից:

#### 3.1.1 Պետական արգելոցներից ստացված տեղեկատվության վերլուծությունը

***<<Խոսքովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունում նշվում է, որ <<<Գոռավանի ավազուտներ>> և <<Խոր Վիրապ>> արգելավայրերում քարտեզագրման և սահմանների ճշտման աշխատանքներ դեռևս չեն իրականացվել, իսկ արգելավայրերի պահպանության աշխատանքները, ինչպես նաև համագործակցությունը հարակից համայնքների հետ դրված են բավարար հիմքերի վրա և անհրաժեշտության դեպքում ծագած խնդիրները լուծվում են համատեղ>>:***

Տեղեկատվությունում բացակայում են <<Գիլան>>, <<Խոր վիրապ>> և <<Գոռավանի ավազուտներ>> արգելավայրերի կանոնադրություններով սահմանված խնդիրների իրականացմանը, պահպանության ռեժիմի ապահովմանը և թույլատրվող գործողություններին ուղղված աշխատանքների նկարագրությունները: Բացակայում են նաև տվյալները 2007-2010 թթ. ընթացքում ֆինանսական, կազմակերպչական, ուսուցողական, ծագած խնդիրների լուծման նպատակով հարակից համայնքների ներգրավման վերաբերյալ:

***<<Շիկահող>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունում նշվում է, որ <<Մշակվել է <<Սոսու պուրակ>> պետական արգելավայրի վերականգնման հեռանկարային ծրագիր, որի հիմնական և առաջնահերթ խնդիրները լուծվել են 2007-2009 թթ.: Ծրագրով նախատեսված աշխատանքները արգելավայրի տարածքում՝ տնկարանի հիմնում, ծառատունկ ծառագուրկ տարածքներում, անտառային (տարեկան, սեզոնային, միանգամյա և ամենամյա) միջոցառումները իրականացվել են դրամաշնորհի պայմանագրով նախատեսված ժամկետներում և ծավալներով>> Ինչ վերաբերվում է <<Զանգեզուր>> պետական արգելավայրին, ապա տեղեկատվությունում նշվում է, որ <<<<Զանգեզուր>> պետական արգելավայրը 2009 թ.-ից <<Շիկահող>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի կազմում է, դեռևս աշխատանքները սկզբնական փուլում են>>***

Տեղեկատվությունում բացակայում են <<Սոսու պուրակ>> և <<Զանգեզուր>> արգելավայրերի կանոնադրություններով սահմանված խնդիրների իրականացմանը, պահպանության ռեժիմի ապահովմանը և թույլատրվող գործողություններին ուղղված աշխատանքների նկարագրությունները: Բացակայում են նաև տվյալները 2007-2010 թթ. ընթացքում ֆինանսական, կազմակերպչական, ուսուցողական, ծագած խնդիրների լուծման նպատակով հարակից համայնքների ներգրավման վերաբերյալ:

Ամփոփելով <<Խոսքովի անտառ>> պետական արգելոց>> և <<Շիկահող>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ներից ստացված տեղեկատվությունները՝ կարելի է ենթադրել հետևյալը.

1. ՊՈԱԿ-ների կողմից արգելավայրերի կառավարումն իրականացվում է տարերայնորեն (ստեղծվում է տպավորություն, որ անտեսված են արգելավայրերի կանոնադրությունները, <<Շիկահող>> ՊՈԱԿ-ի դեպքում բերվում է միայն <<Սոսու պուրակի>> վերաբերյալ ծրագրի մասին տեղեկատվությունը, իսկ արգելավայրի կանոնադրությամբ սահմանված գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է).

2. արգելավայրերի կառավարման համար ծախսված ֆինանսական միջոցների վերաբերյալ տվյալների բացակայությունը վկայում է, որ ՊՈԱԿ-ների ղեկավարների կողմից պլանավորում չի կատարվել (ֆինանսական հատկացումների մասին տեղեկատվության բացակայությունը հնարավորություն չի տալիս պատկերացում կազմել իրականացված աշխատանքների ծավալների և ֆինանսական հատկացումների շարժի մասին)։
3. համագործակցությունը հարակից համայնքների հետ դժվար է գնահատել բավարար, քանի որ տեղեկատվություններում բացակայում են համայնքների հետ համագործակցության փաստացի օրինակները։

**Առաջարկվող քայլերը.** <<Խոսքովի անտառ>> պետական արգելոց>> և <<Շիկահող>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ների կողմից արգելավայրերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1. յուրաքանչյուր տարվա աշխատանքային ծրագրերում ըստ կանոնադրական դրույթների հստակ տարանջատել արգելավայրերում նախատեսված գործողությունները՝ համապատասխան ֆինանսական հատկացումներով.
2. ձեռնամուխ լինել արգելավայրերի կառավարման պլանների մշակմանը։

### **3.1.2 Ազգային պարկերից ստացված տեղեկատվության վերլուծությունը**

**<<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ից** ստացված տեղեկատվությունում նշվում է, որ <<Գիհի կաղնուտային ռելիկտային>> արգելավայրի պահպանության համար, համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 08.04.2009 թ. N 60-Ա հրամանի, <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ում ստեղծվել է նոր Արևիկ մասնաճյուղը>>: Հարկ է նշել, որ <<Գիհի կաղնուտային ռելիկտային>> արգելավայրը նշվում է <<Սևան>> ազգային պարկի 2007-2011 թթ. կառավարման պլանում, որը համապատասխանում է <<Գիհու նոսրանտառային>> արգելավայրին: Կառավարման պլանով նախատեսվում է ստեղծել նոր մասնաճյուղ կամ տեղամաս այդ արգելավայրի պահպանության համար, ինչը և արվել է: Տեղեկատվությունում նշվում է նաև, որ արգելավայրի պահպանության համար 2009 թ. և 2010 թ. Համապատասխանաբար, որպես աշխատավարձ, հատկացվել է 7197.8 դրամ և 4249.0 դրամ:

Հարկ է նշել նաև, որ <<Գիհի կաղնուտային ռելիկտային>> արգելավայրի պահպանության ռեժիմի առանձնահատկություններն արտահայտված են <<Սևան>> ազգային պարկի և <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կանոնադրություններում:

Ստացված հակիրճ տեղեկատվությունից ակնհայտ է, որ իրականացվել են ինչպես կազմակերպչական, այնպես էլ պահպանության հետ կապված որոշակի աշխատանքներ, սակայն հարակից համայնքների հետ համագործակցության հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

**<<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ից** ստացված տեղեկատվությունում նշվում է, որ <<Ախնաբաղու կենու պուրակ>> արգելավայր այցելուների մուտքը բնականոն

*կազմակերպելու նպատակով տեղադրվել են ցուցանակներ: Ստեղծվել է 0.1 հա փորձահրապարակ՝ կենու վերաճի ուսումնասիրության նպատակով: Այցելուների մուտքը արգելավայրի տարածք թույլատրվում է միայն այցետոմսերով և ուղեկցորդներով>>: Ինչպես արդեն նշվել է, <<Ախնաբադի կենու>> արգելավայրը <<Դիլիջան>> ազգային պարկի 2007-2011 թթ. կառավարման պլանով ներառված է <<Աղավնավանքի կենու պուրակ>> արգելոցային գոտու մեջ, որի պահպանության ռեժիմի առանձնահատկություններն արտահայտված են <<Դիլիջան>> ազգային պարկի և <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կանոնադրություններում:*

Տեղեկատվությունից ակնհայտ է, որ իրականացվել են որոշ կազմակերպչական աշխատանքներ, սակայն 2007-2010 թթ. ընթացքում որքան ֆինանսական հատկացումներ են կատարվել, կամ հարակից համայնքների հետ համագործակցության ի՞նչ դրսևորումներ են եղել՝ համապատասխան տեղեկատվությունը բացակայում է:

*<<Արևիկ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվությունում նշվում է միայն, որ <<Բողաքար>> արգելավայրի պահպանության նպատակով արգելավայրին հարակից համայնքների բնակչության հետ հաճախակի կատարվում է քարոզչություն՝ հրդեհներից զերծ մնալու, ապօրինի ծառահատման, արածեցման և որսագողության դեմ: Տեղամասային տեսուչների կողմից կատարվում է ամենօրյա հսկողություն: Աշխատակիցների կողմից հաճախակի կատարվում է ուսուցողական հանդիպումներ տարածաշրջանի բարձր դասարանցիների հետ, կատարվում է ծանոթացում բնության արժեքների և նրանց պահպանության ուղղությամբ: Վերը նշված աշխատանքները կատարվել են աշխատողների նախաձեռնությամբ հասարակական կարգով>>:*

Տեղեկատվության վերջին նախադասությունից ակնհայտ է դառնում, որ <<Բողաքար>> արգելավայրի պահպանության խնդիրները տարերային բնույթ ունեն և չեն ֆինանսավորվում:

Ամփոփելով <<Սևան>> ազգային պարկ>>, <<Դիլիջան>> ազգային պարկ>> և <<Արևիկ>> ազգային պարկ ՊՈԱԿ-ներից ստացված տեղեկատվությունները՝ կարելի է ենթադրել հետևյալը.

1. որոշակի կազմակերպչական աշխատանքներ իրականացվել են <<Սևան>> և <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ների կողմից, սակայն, ընդհանուր առմամբ, արգելավայրերի կառավարումը հիմնականում կրում է տարերային բնույթ՝ պլանավորված աշխատանքների բացակայության պատճառով.
2. համագործակցությունը հարակից համայնքների հետ դժվար է գնահատել բավարար, քանի որ տեղեկատվություններում բացակայում են համայնքների հետ համագործակցության փաստացի օրինակները:

Առաջարկվող քայլերը. <<Սևան>>, <<Դիլիջան>> և <<Արևիկ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ների կողմից արգելավայրերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1. յուրաքանչյուր տարվա աշխատանքային ծրագրերում ըստ կանոնադրական դրույթների հստակ տարանջատել արգելավայրերում նախատեսված գործողությունները՝ համապատասխան ֆինանսական հատկացումներով:

### 3.1.3 <<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության վերլուծությունը

<<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ-ն իրականացնում է <<Որդան կարմիր>>, <<Սև լիճ>>, <<Ջերմուկի ջրաբանական>> և <<Հանքավանի ջրաբանական>> արգելավայրերի պահպանությունը: ՊՈԱԿ-ի կողմից ստացված տեղեկատվությունը ներկայացնում է նշված արգելավայրերում իրականացված աշխատանքները:

<<Որդան կարմիր>> արգելավայրի վերաբերյալ տեղեկատվությունում նշվում է, որ *<<արգելավայրի պահպանության, Արագածի տեղամասում որդանխոտի ճնշող բուսատեսակների մաքրման և հեռացման, սահմանային հատվածներում ռոտզման առուների մաքրման և կարգավորման, տարածքով անցնող ջրագծերի վերանորոգման և կարգավորման համար ըստ տարիների կատարվել է հետևյալ ծախսերը՝ 2007 թ.-3 055 000 ՀՀ դրամ, 2008 թ.-3 747 300 ՀՀ դրամ, 2009 թ.-5 421 100 ՀՀ դրամ, 2010 թ. Համար նախատեսված է կատարել 5 161 400 ՀՀ դրամի ծախս: Արգելավայրում կատարվել են նաև գիտական հետազոտություններ, մասնավորապես՝ գենոֆոնդի և բնության ժառանգության գիտական ուսումնասիրությունների, բուսական և կենդանական աշխարհի մոնիթորինգի, ինչպես նաև որդան կարմիր միջատի հաշվառման և մոնիթորինգի աշխատանքներ>>:*

<<Սև լիճ>> պետական արգելավայրի *<<կանոնադրական պահանջների իրականացման հազվադեպ կենդանական տեսակների հաշվառման և մոնիթորինգի, կենդանական աշխարհի ներկայացուցիչների գույքագրման ցուցակների լրացման համար ըստ տարիների կատարվել է հետևյալ ծախսերը՝ 2007 թ.-200 000 ՀՀ դրամ, 2008 թ.-350 000 ՀՀ դրամ, 2009 թ.-760 000 ՀՀ դրամ, 2010 թ. Համար նախատեսված է կատարել 600 000 ՀՀ դրամի ծախս>>:*

<<Ջերմուկի ջրաբանական>> և <<Հանքավանի ջրաբանական>> արգելավայրերի վերաբերյալ տեղեկատվությունում նշվում է, որ *<<պետ.բյուջեից չեն տրամադրվել ֆինանսական միջոցներ արգելավայրերում որևէ աշխատանքի կատարման համար>>:*

Տեղեկատվությունում նշվում է նաև, որ *<<Կազմակերպությունը համագործակցում է ՀՀ ԳԱԱ Բուսաբանության և Կենդանաբանության ինստիտուտների, ՀՀ ԿԳՆ-ի Հայաստանի պետական ագրարային և Երևանի պետական համալսարանների, ՀՀ ԲՆ Բնության թանգարանի, Բնապահպանական պետական տեսչության, ինչպես նաև ԲՀՊՏ-ների հարակից համայնքների, բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ>>:* Այս ամենին զուգահեռ՝ նշվում է նաև, որ *<<ՊՈԱԿ-ի տեխնիկական զինվածությունը պահպանության, վերահսկողական և գիտական աշխատանքների կազմակերպման համար անբավարար է...>>:*

Ամփոփելով <<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ-ի կողմից ստացված տեղեկատվությունը՝ կարելի է ենթադրել հետևյալը.

1. որոշակի կազմակերպչական աշխատանքներ իրականացվել են <<Որդան կարմիր>> արգելավայրում.
2. <<Սև լիճ>> պետական արգելավայրում, վերակազմավորման օրվանից, Սևանի իշխանի կլիմայավարժեցման աշխատանքներ չեն կատարվել.
3. ՊՈԱԿ-ը իրականացնում է արգելավայրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացման աշխատանքներ՝ հրատարակելով և շահագրգիռ կազմակերպություններին տրամադրելով բուկլետներ: Կազմակերպության գիտական անձնակազմի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով հրատարակվել են 15 հոդվածներ.
4. համագործակցությունը հարակից համայնքների հետ դժվար է գնահատել բավարար, քանի որ տեղեկատվություններում բացակայում են համայնքների հետ համագործակցության փաստացի օրինակները:

**Առաջարկվող քայլերը.** <<Արգելացապարկային համալիր>> ՊՈԱԿ-ի կողմից արգելավայրերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1. յուրաքանչյուր տարվա աշխատանքային ծրագրերում ըստ կանոնադրական դրույթների հստակ տարանջատել արգելավայրերում նախատեսված գործողությունները՝ համապատասխան ֆինանսական հատկացումներով.
2. Ձեռնամուխ լինել արգելավայրերի կառավարման պլանների մշակմանը:

### **3.1.4 <<Անտառային գիտափորձարարական կենտրոն>> ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության վերլուծությունը**

<<Անտառային գիտափորձարարական կենտրոն>> ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվությունում նշվում է, որ <<**Զիկատար**>> **արգելավայրի տարածքում և ուսուցման կենտրոնում իրականացվել են անտառի մասնագետների համար կազմակերպված եռօրյա գործնական ուսուցումներ, համայնքային անտառկառավարման խնդիրներին նվիրված 10-օրյա ուսուցումներ, ՀՀ բնապահպանության նախարարության երիտասարդ մասնագետների համար գիտաճանաչողական այց: ՊՈԱԿ-ը ՀՀ պետակա բյուջեից չի ֆինանսավորվում>>:**

ՊՈԱԿ-ի կողմից արգելավայրի կառավարման գործընթացը ժամանակային առումով դժվար է գնահատել, քանի որ <<Զիկատար>> արգելավայրը ստեղծվել է 2010 թ. Ապրիլին:

### **3.2 ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից ստացված տեղեկատվությունը**

ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվությունում նշվում է, որ արգելավայրերը գտնվում են <<Հայաստան>> ՊՈԱԿ-ի <<Անտառտնտեսություն>> մասնաճյուղերի անտառային տարածքներում և չեն հանդիսանում առանձնացված միավորներ, չունեն կանոնադրություններ և հետևաբար՝ ֆինանսավորումն ուղղվել է անտառտնտեսությունների ընդհանուր տարածքների պահպանությանը: Ընդ որում՝

արգելավայրերի պահպանությանն ուղղված 2007-2010 թթ. տարեկան միջինացված ծախսերի վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունը վկայում է, որ 1 հա արգելավայրի պահպանության համար տարեկան միջին հաշվով հատկացվում է 1167,0 - 5426,0 դրամ գումար: Այլ աշխատանքների մասին տեղեկանքում ոչինչ չի նշվում:

Ամփոփելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ կարելի է ենթադրել հետևյալը.

1. արգելավայրերի կառավարման խնդիրները գրեթե անտեսված են.
2. արգելավայրերի վերաբերյալ հարակից համայնքների հետ համագործակցությունը բացակայում է:

**Առաջարկվող քայլերը.** ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից արգելավայրերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1. յուրաքանչյուր տարվա աշխատանքային ծրագրերում հստակ տարանջատել արգելավայրերում նախատեսված գործողությունները՝ համապատասխան ֆինանսական հատկացումներով.
2. մշակել յուրաքանչյուր արգելավայրի կանոնադրությունը և կառավարման պլանը:

### **3.3 ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից ստացված տեղեկատվությունը**

Ինչպես արդեն նշվել է՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ գործում է միայն «Արագածի ակայան» արգելավայրը: Վերջինիս վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չի ստացվել:

### **4. ՀՀ պետական կառավարման տարածքային մարմինների տեղեկատվությունը արգելավայրերի վերաբերյալ**

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության եւ օգտագործման բնագավառում պետական կառավարման տարածքային մարմինների իրավասություններն են՝

- ա) մասնակցությունը բնության հատուկ պահպանվող տարածքներին առնչվող պետական ծրագրերի եւ կառավարման պլանների մշակմանը.
- բ) աջակցությունը բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունն իրականացնող ծառայություններին.
- գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ»:

ՀՀ պետական կառավարման տարածքային մարմինների՝ մարզպետարանների կողմից ստացված տեղեկատվությունները, ըստ բովանդակության, կարելի է բաժանել հետևյալ երեք խմբերի:



1. Ընդհանուր բնույթի տեղեկատվություն – տրամադրել են ՀՀ Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզպետարանները՝ նշելով, որ արգելավայրերը եղել են ուշադրության կենտրոնում, համայնքներում պարբերաբար իրականացվել են կազմակերպչական, ուսուցողական և այլ աշխատանքներ:

2. Պատճառաբանված տեղեկատվություն – տրամադրել են ՀՀ Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզպետարանները՝ նշելով, որ արգելավայրերի պահպանության ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն չունեն, քանի որ ֆինանսական ներդրումներ չեն կատարվել:

3. Իրավիճակային տեղեկատվություն – տրամադրել են ՀՀ Արարատի, Արմավիրի և Լոռու մարզպետարանները:

ՀՀ Արարատի մարզպետարանը տեղեկացնում է, որ <<Պիմել է կառավարություն <<Խոր վիրապ>> և <<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրերի տարածքների սահմանների հստակեցման, քարտեզագրման, դրանց պահպանման գոտիների ճշտման և պետական գրանցման հարցերով: Արգելավայրերում սահմանազատող ցուցանակները և սահմանային սյուները մինչ այսօր բացակայում են: <<Գիլան>> պետական արգելավայրում մարզպետի կողմից աշխատանքներ են տարվում տարանցիկ ճանապարհների կարգավորման նպատակով: <<Խոր Վիրապ>> պետական արգելավայրում <<Հազարամյակի մարտահրավերներ>> ծրագրի շրջանակներում մարզպետարանը մասնակցել է ջրային տարածքների պահպանման աշխատանքներին>>:

ՀՀ Արմավիրի մարզպետարանից ստացված տեղեկատվությունը բավականին ուշագրավ է: Տեղեկատվությունում նշվում է, որ <<Որդան կարմիր>> արգելավայրը գտնվում է անմխիթար վիճակում՝ չունի ցանկապատ, որի հետևանքով վերջին երկու տասնամյակում տարածքը արածեցվել է, տարածքի առանձին հատվածներում անցյալ դարի 90-ական թվականներին իրականացվել է մելիորատիվ աշխատանքներ, անցկացվել է ջրահեռացման ցանց: Արգելավայրում տիրող իրավիճակի մասին մարզպետարանը բազմիցս ահազանգել է: Առաջարկվել է իրականացնել մոնիթորինգ՝ ճշտելու, թե էնդեմիկ միջատը պահպանվել է, թե ոչ: 2007-2010 թթ. ընթացքում մարզպետարանի կողմից <<Որդան կարմիր>> պետական արգելավայրի պահպանության, վիճակի բարելավման, արածեցման կանխման ուղղությամբ պաշտոնական գրություններով Արագափ, Ջրառատ և Եղեգնուտ համայնքների ղեկավարներին առաջարկվել է գործուն միջոցներ ձեռնարկել և խստորեն հետևել ՀՀ կառավարության որոշումների պահանջների կատարումը ապահովելու համար: Ի նկատի ունենալով արգելավայրում տիրող իրավիճակը, 2009 թ. Մարտ ամսին արգելավայրի հարակից համայնքների և դպրոցների տնօրենների հետ համատեղ խորհրդակցություն է հրավիրվել և հանձնարարվել է կազմակերպչական և բացատրական լայն աշխատանքներ կատարել արգելավայրի պահպանության և իրավիճակի բարելավման համար: Մարզպետի համայնքներ կատարած այցերի և համապատասխան ծառայությունների մասնագետների կողմից մարզային լրատվական միջոցներով (<<Հայրենական>> և <<Ագրոյրատու>> թերթեր, <<ԱԼՏ>> հեռուստաալիք) ազգաբնակչությանը իրազեկվել է արգելավայրի պատմության, բացառիկ լինելու նրա

*նշանակության և զարգացման հեռանկարների և արգելավայրի գործունեության շնորհիվ համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հնարավոր դրական արդյունքների մասին>>:*

Մարզպետարանից ստացված տեղեկատվությունից ակնհայտ է, որ առկա է որոշակի հակասություն <<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության հետ՝ <<Որդան կարմիր>> պետական արգելավայրում իրականացված աշխատանքների մասին:

*ՀՀ Լոռու մարզպետարանից ստացված տեղեկատվությունում նշվում է, որ <<Մարզի արգելավայրերի կառավարումն իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը՝ <<Հայանտան>> ՊՈԱԿ-ի միջոցով: Տվյալ արգելավայրերի վերաբերյալ անտառտնտեսությունների անտառշինական պլաններում տրված է միայն հակիրճ նկարագրություն, որում հստակեցված չեն սահմանները, հիմնախնդիրները, գործողությունների ծրագրերը և հետագա զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումների չափերը և աղբյուրները: Արգելավայրերի կենսառեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ հաշվառումը, գույքագրումը, պահպանումը, զարգացումը և մոնիթորինգը դեռևս բավարար ծավալով չեն իրականացվում: Կենսաբազմազանության վերաբերյալ լիարժեք տեղեկատվական համակարգի բացակայությունը խոչընդոտում է կենսաբազմազանության վրա անտրոպոգեն և բնական գործոնների ազդեցության իրական պատկերի գնահատման և պատճառված վնասի հաշվառման աշխատանքներին: Մարզպետարանի մասնագետների կողմից իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ միջգերատեսչական համագործակցության թույլ մակարդակը, ինստիտուցիոնալ համակարգի անարդյունավետ գործունեությունը, կադրային ներուժի սակավությունը, մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակը և ֆինանսական ռեսուրսների պակասը խոչընդոտում են կենսաբազմազանության պահպանության ու կենսառեսուրսների համապարփակ կառավարման արդյունավետ համակարգի ներդրմանը>>:*

Այս ամենին զուգահեռ՝ մարզպետարանն առաջարկում է հետևյալը.

- *գիտական լուրջ ուսումնասիրություններ իրականացնել մարզի արգելավայրերի ներկա վիճակը պարզելու ուղղությամբ և իրականացնել համապատասխան միջոցառումներ, որոնք համահունչ կլինեն միջազգային չափորոշիչներին,*
- *պետք է նախատեսել նպատակային հատկացումներ մարզի արգելավայրերի պահպանության, պաշտպանության և զարգացման համար, ինչպես նաև ներգրավել միջազգային և հանրապետական դոնոր կազմակերպություններին,*
- *Վրաստանի հետ սահմանամերձ ոչ անտառապատ տարածքներում կատարել անտառշերտերի հիմնում, որը կնպաստի սահմանամերձ գոտու ամրապնդմանը, ինչպես նաև բնապահպանական և էկոլոգիական խնդիրների լուծմանը,*
- *գոյություն ունեցող և նոր հիմնված սահմանամերձ անտառաշրտերին տալ պետարգելոցների կարգավիճակ, որը կնպաստի սահմանամերձ տարածքներում բուսական և կենդանական աշխարհի զարգացմանը ,*

- *հաշվի առնելով անտառածածկ տարածքների անմխիթար վիճակը, միանշանակ արգելել տվյալ տարածքներում երկրաբանահետախուզական և արդյունահանման աշխատանքները, եթե խոսքը չի վերաբերվում պետական ռազմավարական գերակա շահերին:*

Ամփոփելով ՀՀ տարածքային կառավարման մարմիններից ստացված տեղեկատվությունները՝ կարելի է հանգել հետևյալ ենթադրություններին, իսկ որոշ դեպքերում, մասնավորապես՝ ըստ ՀՀ Արարատի և Լոռու մարզպետարաններից ստացված տեղեկատվությունների, եզրակացություններին.

1. արգելավայրերի վերաբերյալ մարզպետարանների տեղեկացվածությունը բարձր մակարդակի վրա է.
2. արգելավայրերի կառավարման գործընթացներում մարզպետարանների և արգելավայրերի պահպանությունն իրականացնող ՊՈԱԿ-ների միջև համագործակցությունն անբավարար է, որոշ դեպքերում իսպառ բացակայում է:

#### **Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ**

Ամփոփելով Հայաստանի պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. արգելավայրերի կառավարումը պատշաճ մակարդակի վրա չէ, որը պայմանավորված է ինչպես արգելավայրերի զգալի մասի կանոնադրությունների, հստակ սահմանված սահմանների բացակայությամբ, այնպես էլ բոլոր արգելավայրերի կառավարման պլանների բացակայությամբ.
2. արգելավայրերի կառավարման գործընթացներում թույլ է, իսկ որոշ դեպքերում բացակայում է համագործակցությունը շահագրգիռ կողմերի միջև: